Սերմանենք և սնուցենք Աստծո խոսքը մեր սրտերում

Սերմանենք սերմը

Կարդացեք Ալմա 32.21–23, 26–30 հատվածները և նշեք այն բառերն ու արտահայտությունները, որոնք օգնում են ձեզ հասկանալ՝ ինչպես սկսել «աճեցնել» վկայությունը:

Ձեր խմբում կիսվեք, թե որ բառերն ու արտահայտությունները տպավորեցին ձեզ և ինչու: Ապա քննարկեք հետևյալ հարցերը.

- Ըստ ձեզ՝ ի՞նչ է նշանակում ձեր սրտում «տեղ տալ» Փրկչին և Նրա ուսմունքներին:
- Ի՞նչը կարող է մարդկանց համար դժվարություն ստեղծել դա անելու համար:
- Ըստ 28–30 հատվածների՝ ի՞նչ կարող է տեղի ունենալ, երբ մեր սրտում տեղ հատկացնենք Հիսուս Քրիստոսի և Նրա ուսմունքների համար:

Մեկ նախադասությամբ ամփոփեք, թե ինչ սովորեցիք այս հատվածներից՝ ձեր վկայությանը վաղ փուլում օգնելու համար:

Սնուցենք սերմը

Ալման ուսուցանում էր, որ սերմը սերմանելը և դրա բարի լինելը բացահայտելը վկայություն «աճեցնելու» առաջին մասն է միայն: Կարդացեք Ալմա 32.37–43 հատվածները և փնտրեք ուսմունքներ, որոնք կօգնեն ձեզ հասկանալ՝ ինչպես շարունակել «աճեցնել» վկայությունը:

Ձեր խմբում կիսվեք, թե որ բառերն ու արտահայտությունները տպավորեցին ձեզ և ինչու: Ապա քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ սովորեցիք 38–40 հատվածներից այն մասին, թե ինչ է տեղի ունենում, եթե անտեսում ենք մեր սրտում «աճած» Աստծո խոսքը:
- Ի՞նչ օրինակներ կան, երբ մարդը կարող է անտեսել Հիսուս Քրիստոսի և Նրա ուսմունքների մասին իր վկայությունը:
- Ի՞նչ եղանակներով կարող եք սնուցել Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին ձեր վկայությունը, որպեսզի այն ամրապնդվելով աճի:

Մեկ նախադասությամբ ամփոփեք, թե ինչ սովորեցիք այս հատվածներից՝ վկայությունն ամրապնդելու մասին, որն արդեն «աճում է» ձեր ներսում:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved.